Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 28.12.2023 թվականի «2024 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 334-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2024 թվականի համայնքի բյուջեի ծախսային մասի փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Հաշվի առնելով սպորտի բնագավառում մեր մարզիկների ակտիվությունը և տարբեր սպորտաձևերում ցուցաբերած հաջողությունները, անհրաժեշտ է բյուջեում սպորտային նպաստների համար նախատեսված միջոցներն ավելացնել 5 000.0 հազար դրամով:

Համայնքապետարան են դիմել Այնթապ բնակավայրի «Բյուզանդ Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, Նորամարգ բնակավայրի «Ագապի Քադեշյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը և «Նոր Խարբերդի Մնացական Ղազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը, օժանդակության խնդրանքով: Այս դպրոցներն ընդգրկվել են այն դպրոցների ցանկում, որտեղ պետք է բացվեն «Արմաթ» լաբորատորիաներ: Ծրագիրն իրականություն դարձնելու համար դպրոցներն ակնկալում են համայնքի աջակցությունը, որի համար անհրաժեշտ է բյուջեում դպրոցներին հատկացվող նվիրատվություններն ավելացնել 16 000.0 հազար դրամով:

2024 թվականի բյուջեի ֆոնդային մասի ծախսերում անհրաժեշտ է ներառել հետևյալ կապիտալ աշխատանքները՝

- Մասիս համայնքի Հովտաշատ բնակավայրի գերեզմաններ տանող ճանապարհի հիմնանորոգում՝ 47 033.8 հազար դրամ:
- Մասիս համայնքի Մասիս քաղաքի Նոր թաղամաս 31 շենքի բակի բարեկարգում՝ 9 654.2 հազար դրամ:

2024 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Մասիս համայնքի ջրամատակարարման, ջրահեռացման համակարգի և մաքրման կայանի կառուցման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է բյուջեի ծախսերն ավելացնել 201 369.0 հազար դրամով: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 503 420.4 հազար դրամ, որից համայնքի ներդրումը՝ 40 %:

Համայնքապետարանի 5-րդ հարկի դահլիճի գույքի ձեռք բերման համար անհրաժեշտ է 11 700.0 հազար դրամ:

Մասիս քաղաքի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կառուցման աշխատանքներն ավարտվել են, սակայն նախագծանախահաշվային աշխատանքներով նախատեսված չի եղել հակահրդեհային համակարգի տեղադրում: Նշված համակարգի տեղադրման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 980.0 հազար դրամ:

Ռանչպար բնակավայրի 4-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքների համար անհրաժեշտ է ձեռք բերել փորձաքննություն անցած նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթ, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 550.0 հազար դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի Ծախսեր	ֆոնդային մասի Ծախսեր	
				Ծախսեր				
1	01	1	1	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Վարչական սարքավորումներ	5122		11 700.0	
2	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	-21 000.0		
3				Վարչական սարքավորումներ	5122		-271 287.0	
4	04	5	1	**Ճանապարհային տրանսպորտ.** Մասիս համայնքի Հովտաշատ բնակավայրի գերեզմաններ տանող ճանապարհի հիմնանորոգում	5113		47 033.8	
5				Ռանչպար բնակավայրի 4-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		500.0	
6				փորձաքննություն	5134		50.0	
7	06	1	1	**Բնակարանային շինարարություն.** Մասիս քաղաքի Նոր թաղամաս 31 շենքի բակի բարեկարգում	5113		9 654.2	
8	06	3	1	**Ջրամատակարարում.** Մասիս համայնքի բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգման և մաքրման կայանի կառուցման աշխատանքներ	5113		201 369.0	

9	**08**	**1**	**1**	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Սպորտային նպաստներ	4727	5 000.0		
10	**09**	**1**	**1**	**Նախադպրոցական կրթություն.** Թիվ 3 մ/պ համար հակահրդեհային համակարգ	5129		980.0	
11	**09**	**2**	**2**	**Միջնակարգ կրթություն.** Նվիրատվություն	4819	16 000.0		
						0.0	***0.0***	
				Ընդամենը				

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ